

զեցու մօտ և վերան քարեր դարսել: Ուժառաւորները մոմ են, վառում ալդ քարակոյտի վրայ և մատաղներ անում:

## Ա թ ջ.

Սրա մասին կայ հետևեալ աւանդութիւնը.

Արջը ժամանակով մարդ ջրաղացպան է եղել. երբ շատ գողութիւններ է արել, Աստուած բարկացել է վրան և արջ գարձրել Եւ ապացուց սրան՝ երբ սպանում են արջին, առ առաջին թաթերը միմեանց վրայ դնելով՝ խաչում է,



Բոլոր կենդանիները և բոլուերը լեզու ունին և կարոք են խօսել: Որպէսզի մարդիկ կարողանան նրանց հասկանալ, պէտք է, որ շահմար օձը իւր լեզուն քաշէ մարդու բերանը: Այս բաղդին արժանացել են ովչի (որսորդ) Փիրումը և Լոխմանին:

## Է. ԳԼՈՒԽ.

## ԼՈՒՍԱԿՈՐՆԵՐԻ ՊԱՅՏԱՄՈՒՆք

Արեւ եւ լուսին.—Վարանդալում գեռ մինչև ալժմս Ել ծերունիներ և պառաւներ կան, որոնք պաշտօւմ են արեգակն և լուսին: Նատ անգամ պատահում է, որ սրանք ծունը են չոքում նոր ծագող արեգակի և նոր նորող լուսնիակի առաջ և ազօթում նրանց այսպէս. «Աստծոյ ցնծուղն տուած ըրիգնակ, այ մօրալ նոր ըլած լուսնինկեալ, իմ երեսս քո ոտանըք տակը, դու իմ խոխէքս պահես: և ալլն: Լուսնի նորին դրեթէ բոլոր գիւղացիները առաջին անգամ լուսնին նալելիս, միքանիսը բաղդաւոր համարուած երեխալի կամ մարդկանց երեսին են նալում, լուսալով, որ ալդ ամիս բաղդա-

ար կերպով կ'անցնեն, ուրիշներ գրամի վրայ հայեացք ձգելով համբուրում և ճակատին են դնում, լուսալով շատ գըրամ շահել ալդ ամսում։

Արեւով երգուիլը շատ սովորական է՝ «իմ արեւը վկայ, քու կանանչ արեգ վկար»։

Միհր աստծու պաշտաման մնացորդ՝ խոտի կամ փալտի կոլտեր վառելու սովորութիւնը գեռ մինչև ալժմ էլ շարունակում է Վարանդալի գիւղերում, թէև քաղաքում արգէն վերջացել է։

Տեառնընդառաջի երեկոին նշանուած երիտասարդները՝ ցրտնի ծառի ճիւղեր են բերում և գարսում եկեղեցու գաւթում։ Յետոյ եկեղեցու ջահից բերած մոմով վառում են ալդ կոլտը, ծուխի ուղղութունից գուշակութիւններ անում, նորահարսին, ինչպէս և՝ նորածին երեխալին երեք անգամ պըտացնում շուրջը։ Երիտասարդները թռչում են կոլտի վրայով, ուրիշներ պար բռնում շուրջը։

Արեի և լուսնի մասին կան յետեւեալ աւանդութիւնները։

### Ա.

Ժողովուրդը լուսինն ու արեւը քոյր և եղբայր է համարում։ Մի օր քոյր արեւը ասել է, թէ ինքը վախենում է գիշերը մանգալուց և ցերեկն էլ ամաչում երբ իրեն են նայում։ Ալդ ժամանակ եղբայր լուսինը պատասխանել է նրան, թէ ինքը գիշերը կը շրջի, թող ցերեկը նա պատուի, միայն վերցնի մի քանի թոփ ասեղ և խրի իրեն նայողի աչքերը։ Եւ ալդպէս էլ եղել է։ Արեւ նստած մի առիւծի մէջքին, ոլանում է երկնակամարի վրայով, և երեկոյեան գնում հանգստանում մօր գրկում։ Առիւծը իւր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից։

### Բ.

Մի օր լուսնի և արեի մալը խմոր էր հունցում, որ-

գին, լուսինը, գալիս և խնդրում է, որ իւրեն համար էլ մի քիթ շինի, մայրը բարկանում և խմորոտ ձեռքով խփում է երեսին, Դեռ մինչեւ ալժմս էլ լուսնի վրայ երևում են նրա խմօրոտ մատների հետքերը:

Գ.

Մի կին իւր որդու համար գուլբայ էր գործում։ Երբ քիչ էր մնացել վերջացնելու, արեգակը ուզում էր մայր մտնի, ուստի մայրը ասաց որդուն, թէ թող մնալ վաղը կը վերջացնեմ։ Որդին աղաջում է մօրը, որ ալդ օրը վերջացնի։ Այդ գէպըում, ասում է մայրը, աղաջիր արեգակին, որ մի քիչ սպասէ։ Երեխան դառնում է արեգակին և ասում։ «Ձտն արեգակ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիզի գուլպաս, հագնեմ»։ Արեգակը սպասում է և երբ երեկոյեան ուշ մայր է մտնում, մայրն հարցնում է, թէ ինչո՞ւ ալնքան ուշացաւ։

Արեգակը պատասխանում է, թէ մի երեխայ խնդրեց իւրեն սպասել, մինչեւ որ մայրը կը վերջացնէր նրա գուլպան։ Արեգակի մայրը բարկանում է և անիծում երեխալին, որ ցերեկը մեռնի և գիշերը կենդանանալ, նրա մալրն էլ երբէք չվերջացնի գուլպան։ Եւ այնուհետեւ ալս երեխան ցերեկները մեռած է լինում, իսկ գիշերները կենդանանում և գալիս է մօր մօտ, խնդրում իւր զիզի գուլպան։ Սակայն մայրը երբէք վերջացրած չէ լինում, որովհետեւ գործածը ինքն իւրեն քանդում է և խեղճ երեխան ոտարորիկ թափառում է։


Գ.

Մի հարսնացու ցանկանալով անշուշտ աւարտել իւր փեսացուի գուլպան, խնդրել է արեգակից մի քիչ էլ սպասել։ Բարի արեգակը կատարել է հարսնացուի խնդիրը և ուշ մայր մտել։ Սակայն արեգակի չար մայրը, հարցնելով նրա ուշանալու պատճառը՝ բարկացել է և անիծել հարսնացուին,

ասելով. «Քար դառնայ նայ: Խսկոյն խեղճ հարսնացուն քար  
է դարձել: Եւ այս օր էլ Նինդի գիւղի մօտ ցոյց են տալիս  
ալդ քար դարձած հարսնացուն:

Խաւարում.—Արեի և լուսնի խաւարումը բացատրում  
են այսպէս. Քաջքերը կամ սատանաները կտրելով նրանց  
ճանապարհները, ուզում են վիրաւորել նրանց, իսկ նրանք  
պաշտպանում են և վերջի վերջու լաղթում:

Խաւարման ժամանակ մեծ սուդ է տիրում գիւղերում.  
Երիտասարդները հրացաններ են արձակում դէպի վեր, մտա-  
ծելով թէ կարող են քաջքերին խփել, ուրիշներ պղնձեալ  
ամաններ ծեծելով և զանգերը խփելով ահագին աղմուկ են  
քաձրացնում, դարձեալ քաջքերին վախեցնելու նպատակով:  
Իսկ կանանցից շատերը լալիս են ցաւից և երկիւղից:



Օր. —Երկնքում կալ երեք թռչուն: Երբ սրանցից առա-  
ջինը ձայն է հանում, բացում է առաւօտը, երկրորդի ձայ-  
նելիս դառնում է կէս օր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայ-  
նում՝ մուլթը պատում է աշխարհը:

Աստղեր. —Սրանցից ամէն մինը պատկանում է մի մար-  
դու: Բարեգործ և առաքինի մարդունը պայծառ է լինում,  
չարագործ և անբարուականինը՝ աղօտ: Երբ աստղը վալը է  
ընկնում, և կամ փոխում է իւր ընթացքը, մարդը մեռ-  
նում է:

Գիսաւոր աստղեր երեւալիս ասում են թէ մեծ աղէտ-  
ներ է պատահելու, թագաւոր է մեռնելու և ալին:

Յարդ գողի Շանապարհի մասին պատմում են, թէ մի  
մարդագալլ հարս լուանալով իրենց հիւրի ստները, շատ փափ-  
լիկ է գտել և երբ բոլորը քնել են, գնացել է, որ ուսի,  
սակայն հիւրը դաշոյնի մի հարուած է տուել նրա ծծին:  
Խսկոյն կաթը ցալտել է երկինք, և մինչև ալժմս էլ իւր  
հետքը թողել:

Ուրիշներ էլ հաւատացնում են, թէ դա Աստծու արքայութեան ճանապարհն է:

Նատերն էլ պատմում են, թէ մինը (չգիտեն թէ ով) դարման է գողացել և ճանապարհին վալր թափել, որի հետքը մնացել է ու այժմ էլ կոչվում «ղերմանիղի»:

**Ամնզ.**—Սաստիկ սպիտակ և առանձին կանգնած ամպեսնելիս ասում են, թէ դա Աստծու միրուքն է:

Իսկ եթէ այս ամպը շատ փոքր է, ասում են դարմանագող է, որովհետեւ դա նշան է, որ քամի պիտի լինի և կալերից դարման գողանար:

Որոտման մասին ասում են, իբր թէ մի պառաւ միպարկի մէջ քարեր ածած քաշ է տալիս, որից և՛ յառաջանում է գոռգոռոսց:

Ոմանք էլ կարծում են, թէ դա յառաջանում է «ըլլեկօծն» քամու սաստիկ շարժումից:

Սուազին որոտման ժամանակ գիւղացիները երկաթ ևն կծում և քարոզ իրենց գլխներին խփում, ասելով.

«Քըրըգլօխ, ըրկըթը կեռիկը և այս այն նպատակով, որ այդ տարի կարկուտ չգար:

**Որոտ.**—Մի բամբակի պառաւ, նստած մի բամբակի ձիռ վրայ, ձեռին մի բամբակի մտրակ քշում է երկնքով: Նըտձիու ոտների տրոփինից յառաջանում է որոտը:

Կայծակը հրեշտակների գաւազանն է, որով խփում են ստոտաններին:

Ոմանք էլ կարծում են, թէ երկու հրեշ կայ, որ կըստում են միմեանց հետ սրերով, այս սրերի փայլից յառաջանում է փայլակը, միմեանց ընդհարումից՝ կալծակն ու որոտը: Եւ կամ երկու վիթխարի գազաններ միմեանց հետ «զոչի են տալիս», — պոզերը միմեանց խփելով կուռում են, որոնց պոզերի ընդհարումից յառաջանում է կալծակը:

Ուրիշներ էլ պնդում են, թէ երկնքում մի պառաւ մի-

թղուկ ծառալ ունի, որ փայտ կոտորելիս կացինը քարին է դիպցնում, որից և կայծակ է յառաջանում:

Ճիածանը, - տեղական բարբառով «կանաչ կարմիրը», Աստծու գօտին է համարւում: Նրանով գուշակութիւններ են անում, այսպէս՝ եթէ դեղին գոյնը միւսներից աւելի է, այդ նշան է, որ այդ տարին շատ հիւանդութիւններ պիտի լինի. Երբ կանաչ գոյնն է աւելի, դա ապացոյց է, որ այդ տարի ցորենը տռատ է լինելու, իսկ եթէ կարմիրն է աւելի, գինին է տռատ լինելու:

Մի աւանդութիւն էլ տսում է, թէ ճիածանը այն կանաչ կարմիր թելն է, որ ըերեց Գաոպար թագաւորը, իրու կնքահայր Քրիստոսի պարանոցը կապելու:

Նրկրաշարժի մասին հետևեալ կարծիքներն են տերում:  
ա. Գետնի տակ տայրում է մի եղջերու, որի եղջիւրի վրայ գրուած է մի մեծ կաթսալ, լի մի տեսակ հեղուկով: Երբ հեղուկը տաքանում է, կոտրում է կաթսան և կտարները. խփում գետնին, որից և յառաջանում է «ժամբքը»:

բ. Գետնի տակ կալ մի եղ, պոչը դրած մէջքին, երբ շարժում է պոչը և խփում գետնին, երկրաշարժ է լինում:  
գ. Գետնի տակ մի ձուկ կալ, երբ մէջքը քոր է գալիս, շարժում է և իւր հետ շարժում երկիրը:

դ. Մի հրեղէն քամի մտնում է երկրի մէջ և շարժում նրան:

ե. Էլլրկոծն քամին մտնում է ալն ջրի մէջ, որի վը-ըալ գտնւում է մեր աշխարհը և ալիկոծում ջուրը: Ջրի ալեկոնութիւնից շարժում է և մեր երկիրը:

### Ը. ԳԼՈՒԽ

## ԶԱՇԵՐ ԿԱՍ ՍԱՏԱՆԱՆԵՐ

Դռնավարդի և Քառասնի, ինչպէս և Սզոխի և Թաղ-լորի միջև կան խոր ձորեր, սաղարթախիտ ծառերով ծած-